

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐՍԿԱՆԵԿԱՆ ԵՒ ՔՍԼԱՔԱՆԵԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զիջքով և նոյն պրոգրամայով: Մինք ստանում ենք սեփական չեմուտքները:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՐԱՎՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիսի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներում «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԵԿԱՆՈՒԹԻՒՆ

Ամեն ազգի մէջ կան վատ մարդիկ. — ԵՆԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մովսիսյան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց շաղախանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎՐԱՏԱՆԸ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՆԵԿԱՆ. Նամակներ թիւրքաց շաղախանից.

ԱՄԵՆ ԱԶԳԻ ՄԷՋ ԿԱՆ ՎԱՏ ՄԱՐԴԻԿ

Անուրանալի է, որ հայերի վրա, օտարների աչքում, վատ ստուեր են դրում այնպիսի մարդիկ, ինչպէս խօսքով, Զիւլալ և այլն: Անուրանալի է, որ օտարները և կովկասեան միւս ազգութիւնները, որոնք մեր հարեաններն են՝ մասամբ իրաւունք ունեն վատ աչքով նայել հայերի վրա: Մարդիկ, ինչպէս վերոյիշեալները, իրանց արարքներով վայր են դրում հայերի պատիւը ուրիշների աչքում:

Բայց այնու ամենայնիւ, ծայրայեղութեան չը պէտք է հասնել, չը պէտք է ընդհանրացնել մասնաւոր երևոյթները: Նայել, այնպիսի մարդիկ, ինչպէս խօսքով, Զիւլալ և ընդհանրապէս, կան ամեն ազգի մէջ, — միթէ չը կան վրացիների մէջ իշխան Էրիստովի պէս մարդիկ, այն հոգեւորաւոր իշխան Էրիստով, որը իր անասելի խաբարներով ամեն մի և նոյն երգի մէջ մի քանի տեսակ ոճեր, մի քանի բարբառներ, միմանց հետ շատ քիչ կապ ունեցող պարբերութիւններ և երբեմն իսկ բոլորովին միտք չունեցող և միմանց անհասկանալի դարձնող տողեր:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

XVI

188... ղեկավարների 30, վան

Բարեկամ.

Թիւրքահայաստանի մէջ, բայց միջիններէն, ոչ ոք ունի վասպուրականցիների չափ ժողովրդական առատ և ամեն տեսակ բանաստեղծութիւններ. շատերը զբոյն, հաւաքեցին և դեռ կան, որ հաւաքում են շարունակ. բայց այդ աղբիւրը զղկում է շարունակ և միշտ կարելի է լսել նոր երգեր, նոր անէծքներ, օրհներգեր, սիրային ցայգանուագներ, երգիծական խաղեր և նոյն իսկ կատակերգութիւններ և ողբերգութիւններ, որոնց հեղինակները անյայտ են և շատ անգամ մի ամբողջ քեֆ անողների խումբ, երբեմն մի հասակաւոր կին, երբեմն մի արտասովոր զէպը, յաճախ քրդական բարբառութիւնները, պանդխտութիւնը և այլն հեղինակում են: Բերում կապում միմեանց, նուագածունները առնում են նրանց մի օր և է եղանակի տակ և ահա բաղմամբ այլազան երգեր լսվում են ամենքի բերաններից:
Նոյն իսկ այդ է պատճառը, որ յաճախ կարե-

բայութիւններով յայտնի եղաւ ամբողջ Եւրոպայում: Պարիզում, Լոնդոնում, Վիեննայում և վերջը բանտարկից բերլինում, միթէ ուռաաց ազգը, որը համարվում է մի շիտակ ազգ, չէ արդիւնաբերում մի մի անգամ այնպիսի մարդիկ, ինչպէս իմանալ, որը կողոպտեց թագաւորական զանձատուներ, և այլն...

Ուրեմն, եթէ հայերի մէջ պատահում են խաբարներ, ի հարկէ դա ամօթ է բերում հայերին, — բայց դարձեալ արդար չէ երբ մարդիկ հասնում են այնպիսի ծայրայեղութեան, որ խօսքովները, Զիւլալների արարքները ընդհանրացնում են և վերաբերում են ամբողջ ազգին, այդ տեսակ ստոր արարքները բնաւորէ համարելով բոլոր հայերին: Արդար չէ, երբ հայերի մէջ տեսնելով տղեղ երևոյթներ, մեր հարեան կովկասեան ազգերը, ինչպէս օրինակ վրացիք, բեմի վրա ջանում են ներկայացնել այնպիսի պիեսներ, որտեղ բոլոր վատ, հարստահարիչ, խաբարայ տիպերը հայերն են, իսկ ազնիւները վրացիք: Միթէ չը զիտեն վրացիք, որ Բուլժայիսի մէջ ամենաանաստուած հարստահարող վաշխառուներ մի քանի յայտնի վրացի, իմէրէ վաշխառուներն են: Միթէ դա մեզ իրաւունք կը տար մի պիեսա զերէ ներկայացնելով ընդհանրապէս վրացիներին, որպէս հարստահարող, վաշխառու...
Եթէ անուրանալի է, որ հայերի մէջ

լի է տեսնել մի և նոյն երգի մէջ մի քանի տեսակ ոճեր, մի քանի բարբառներ, միմանց հետ շատ քիչ կապ ունեցող պարբերութիւններ և երբեմն իսկ բոլորովին միտք չունեցող և միմանց անհասկանալի դարձնող տողեր:

Ահա քիչ մի օրինակ.

Ճաղցի առուն ձիւր կուկէր

Աղչիլը Լաճուն տիւր կուկէր

Ճախչի առուն կանաչ էր

Ախչիլը Լաճուն ճանաչ էր:

Մի ուրիշ օրինակ պարբերական տուների Լա. նկատիր երրորդ տունը:

Խէրդ անծած չըլկուն կաղար

Հաղա ուղկով էլա բէլար

Դուռ տփելով մաշաւ ձիկ

Անիծի քէ սուրը Մկրտիչ:

Որ հաղա ուղկով կելնես կուճիկ,

Կերկաւ մամուն նեղ պուրուճիկ

Չօռ քէօ խօր կալաթման

Սարեկ պէնց, կատուն խան

Խէրդ կուռաւար կը մեայ դճան:

Թիւթիւնի արտ վեր էնա տէարին

Էրկու շուն լծեր են կը վարին

Ին ձիւ կասի թիւթիւն փիսի.

Կէս վարամի, կէս ցաւի

Թիւթիւն խմող քիչ մարդ ի:

Առաջին երկու հնգտողեան տուներով հեղինա-

կան խաբարներ, այն էլ անուրանալի է, որ ամեն ընդունակ, տաղանդաւոր ազգի մէջ, ինչպէս հայերն են, ամեն հոգեկան արտայայտութիւնները, ինչպէս վատ, այնպէս և լաւ յատկութիւններ միշտ ծայրայեղութեան են հասնում: Այդ տեսակ բընաւորիչ, խիստ, որոշ յատկութիւններ ունեցող ազգերի մէջ լինում են միշտ և ծայրայեղ վատ մարդիկ, և ծայրայեղ ազնիւ մարդիկ:

Այն ազգը, որը իրանից արտադրում է Եւրոպիներին, ընդունակ է արտադրել և Ուրիէլ Ափստային, այն ազգը, որ արտադրում է խօսքովներին, Զիւլալներին և tutti quanti, ընդունակ է եղել միշտ արտադրել ոչ թէ միայն անպայման ազնիւ մարդկանց, որոնց մօտ ազնւութիւնը հասցրած է ծայրայեղութեան, բայց և հերոսներին:

Այն ժամանակից, երբ Ռուսաստանը տիրել է Անդրկովկասը, ուսու գնեցաւ ինտերանտներ թուում միայն երկու հայեր են եղել, — և երկուսն էլ, այդ ամենքին յայտնի է, անպայման ազնիւ են եղել, որոնք ոչ թէ միայն չեն հարստացել այդ պաշտօնի մէջ, այլ պարտքերի մէջ խրված են մեռել, և նրանից մինչ նոյն իսկ վերջին ազգատուութեան մէջ է մեռել... Միթէ չը յայտնի չեն մեզ այնպիսի անպայման ազնիւ հայեր, ինչպէս Արզումանի, միթէ չը յայտնի չէ մեզ, որ զինեալ Տէր-Ղուկասով, որը կարող էր հարստանալ պատերազմի ժամանակ, վախճանվեց Թիֆլիսի հիւրանոցներից մինում, թողնելով իր պահարանում միմիայն 35 ռուբլի: Միթէ չը զիտենք, որ հոմա Լօրիս-Մէլիքով, որը իր կարգադրութեան տակ միլիոններ ունէր, ուսու-թիւրքաց պատերազմի ժամանակ, չօգտվեց այդ միլիոններից, կամ իր ձեռքում միլիոններ ունենալով՝ Վաշխառուի ժամանակաւոր ոչնչացնելով ժամանակ, հիւանդութեանը վերջ դնելուց յետոյ՝ վերադարձրեց կառավարութեանը այդ միլիոնները...
Մենք բաւական ենք համարում այդ օրինակները: Եթէ մեր մէջ կան խօսքովներ և այլն, ուրիշ կողմից մեզ մօտ կան վատից, Մուշից եկած՝ պանդխտ զիւղացիք, որոնք մեծ կենտրոններում, Վ. Պոլսում, Թիֆլիսում, Բաթումում համարվում են անկող, յայտնի են իրանց անպայման շիտակութեամբ. նրանց յանձնվում են ապապտութեան համար իրանց տէրերի կողմ:

Կը հայտնում է չլիւսն կաղարին, որ իր առանձին ուղկով բէլարեցաւ, դուռն էլ ձեռնով ձկնիկ մաշեցաւ. երկրորդ տունով՝ որ երբ հեղինակը առնելը ուղկով է՝ կաղարը կծկվում և դնում մտնում է նեղ ծակերը, իսկ երրորդով՝ յանկարծ յայտնում է, որ ծխախոտի արտը բընակի վրան է և երկու շուն լծած արօրով վատ են, ով է ասողը թէ ծխախոտը վատ է. կէսը թըքախտ է, կէսը ցաւ և թէ ծխախոտ ծխողը ինչ մարդ է:

Ինչ կապ ունի կաղարը ծխախոտի արտի հետ:

Այնու ամենայնիւ կան և շատ զեղեցիկ կաղամուս երգեր, մինչև իսկ այնպիսիները, որոնց երբ լաւ հասկանում են՝ առանց արտաստեղծութեան կարող լսել, մասնաւոր երբ երգում է մի լաւ ձայն ունեցող երգիչ՝ իր տխուր և իշխատակներ արթնացնող մեղեդիական ձայնով...

Ոճերի, պարբերութիւնների և տողերի անկանոն միջան ձեռ, ինձ թվում է, որ առնուած է տաճիկ և քիւրդ գնչուներից, որոնք հեղինակում են անհամար այդպիսի երգեր և միայն յանգեղը տեղ բերելու համար շատ անգամ միմանց մօտ են դնում այնպիսի երկու տողեր, որոնց մէջ ծիծաղում է, իսկ միւսը լալիս, կամ թէ մէկը սարերի վրայից է թռչում, միւսը ձորերի խորքերից: Չը զիտեն Եւրոպացիք թէ հեղինա-

մից՝ ահագին գումարներ, որոնք հաւատարմութեամբ և սրբութեամբ պահպանվում են ամբողջ այդ խաւար, բայց անպայման ազնիւ մարդկանց ձեռքում:

Ամեն ազգի մէջ կան և լաւ և վատ մարդիկ: Բայց մանաւոր ապացուցված իրողութիւն է, որ այնպիսի ազգերի մէջ, որոնք պատմութեան մէջ յայտնի են որպէս հանձարեղ ազգեր, որոնց հոգեկան բոլոր արտայայտութիւնները խիստ, ծայրայեղ, նոյն իսկ գոյց է և անգուսպ են, — այդ տեսակ ազգերի մէջ գուցէ թագաւոր ծայրայեղ հրէշաւոր վատ մարդկանց հետ, արտադրվում են միշտ և ծայրայեղ, անպայման լաւ մարդիկ և եթէ այսպէս կարելի է ասել՝ հրէշաւորութեանը հասցրած ազնւութեան տիպարներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Դեկտեմբերի 9-ին

Նոյեմբեր ամսին այստեղ մի քանի յօդուհաններ կատարվեցան: Բուրինշէյնի յօդուհանի մասին անցեալ նամակում գրեցի: Շատ անգոյն անցաւ, եթէ մինչև անգամ չը համեմատենք Պէտերբուրգում կատարված արտակարգ հանգէսների հետ. կարծէք պատուց յօդուհան լինէր:

Նոյեմբերի 20-ին ամբողջ Եւրոպական Ռուսաստանը համեմատ, բայց դարձեալ համեմատութեամբ տօնում էր «Ալեքսանդր II-ի դատաւարական կանոնադրութեան» քառհիսնամեակը: Մոսկվայում այդ առթիւ մի քանի եկեղեցիներում (համալսարանական եկեղեցում իրաւաբան ուսանողների կողմից, դատաստանական հաստատութիւնների շինութեան մէջ այնտեղի ծառայողների կողմից և այլն) մեղծանքներ կատարվեցան: Բացի դրանից այդ օրը կայացան երկու հանդիսաւոր ճաշկերպ, որոնց մասնակցում էին դատաստանական առեւտրներում ծառայողներ, փաստաբաններ, մամուլի ներկայացուցիչներ, պրօֆէսորներ և այլն: Ճաշկերպների ժամանակ ծառեր են ասվել: «Նրմութ» հիւրանոցում կայացած ճաշկերպին առաջին ճառը ասել է նահանգական դատարանի նախագահ Վ. Լավրով, յետոյ խօսել են հայտարար դա-

կի մի զրուսաբը կարգադրելով, որը ինձ օրերով ծիծաղեցրել է, որովհետեւ միմանց հակառակ մտքերով լցված է եղել այդ զրուսաբը: Մեր ժողովուրդն էլ ունի այդպիսի ձևեր և դա, սակայն կազմում է բանաստեղծութեան մի առանձին ճիւղը, օրինակ

Վազեց թուշուն, թուաւ մըջին

Չաւց գէտէշ, խրինշաւց էշ

Չորս էլ եկան մէկ տեղ ժողուան

Մէկ տաս տարվայ էշ մը կնդան (զտան)

և այլն:

Խաբարչիւր առդի մէջ փայլում է հակասութիւնը, որովհետեւ ոչ թուշունը վաղուտ է, ոչ մըջինը թուաւ, ոչ գոմէշը զտուտ և ոչ էլ խրինշաւցը: Եւ ոչ իսկ կարող էին գտնել տարւոյ մի դիակ...

Այսպիսի բանաստեղծութիւնների մէջ երեւի են գնչուները, որոնք չինում են տաճիկներն հիւանայի հակասական երգեր և շատ անգամ աղողում են այդպիսի երգերով մահու չափ ծաղրել անոց և կողոպտող փաշաներին, վաշխառու հարուստներին և սուտ բարեպաշտ հրօնաւորներին: Դժբաղդաբար թարգմանել մի այդպիսի աղջկային (otigiale) բանաստեղծութիւն՝ անկարելի եղաւ:

Վասպուրականցիների ժողովրդական բանաստեղծութիւններից մեծ մասը ունեն եղանակներ և այդ եղանակներն իսկ կազմում են երաժշտա-

տաւորները ժողովի նախագահ պ. Գրեկով, երգչուհի Կառապետարները Ֆալկովսկի, Վոլֆֆերտ, Պրեմիս, Պրեմիսկի, և յայտնի հրապարակախոս Գոլցեի: Բոլոր ճառարխօսները յիշել են այն մեծ բարիքները, որ տուել է այդ կանոնադրութիւնը Ռուսաստանին, շնորհիւ այն հանրամարդկային, համակրելի գաղափարները, որոնց վրա հիմնված է եղել այդ կանոնադրութիւնը: Նոյն առթիւ նոյեմբերի 22-ին համալսարանի հանգիստարանում կայացաւ Մոսկվայի իրաւաբանական ընկերութեան նիստը: Հաւաքվել էր անգլիկ բազմութիւն: Նախագահի երկրորդ օգնական երգչուհի հաւատարմատար Պրեմիսկի կարգաց իր գեղեցւոյն՝ 1864 թ. նոյեմբերի 20-ի Կատաստանական կանոնադրութիւնը և փաղաքացիական դատաւարութիւնը: Յիշելով սկզբում այն չարամիտ և կեղծաւոր յարձակումները մասին, որոնց ենթարկվել է անցեալ թաղապետութեան այդ բարեփոխումը, և այն անբարեխաղ ազդեցութիւնները մասին որոնք նրան շատ փոխութիւններ են ենթարկել, թողնելով դրա մասին վերջին անգամ վճիռը ապագայ սերունդներին և անաշուտ պատմութեանը, պ. Պրեմիսկին մատնացոյց արեց այդ կանոնների մեծ հասարակական նշանակութեան վրա, կանոնները, որոնք առեցին Ռուսաստանին անկախութիւնը դատաւորներ, հաւասար դատաստան ազգային ու հարուստի համար, հրապարակական, օրինապահ և արդար դատաստան: Հառի վերջում, պ. Պրեմիսկին յիշեցրեց, որ այդ կանոնադրութիւնից յետոյ հրատարակված բոլոր նոր օրենսդրութիւնները ուղղված են եղել քրեական դատաւարութիւնը կանոնաւորելու, իսկ քաղաքացիական դատաւարութիւնը մնացել է բոլորովին անկատար, չէ զարգացել, չը նայելով որ թէ կանոնը, թէ դատաստանական պրակտիկան անյայտնի ապացուցել են, որ անհրաժեշտ կարելի կայ ուղղելու այդ դատաւարութիւնը: Այլի առաջ ունենալով, որ այժմ լրացել է դատաստանական այդ կանոնադրութեան հաստատութեան քառասունհինգ տարի, իսկ իսկական 25-ամեայ յոբելեանը կը լինի 1891 թ. ապրիլի 23-ին (Մոսկվայի նահանգում նոր դատաստանական կանոնադրութիւնը մտցնել է 1866 թ. ապրիլի 25-ից), պ. Պրեմիսկին առաջարկեց ընկերութեանը պատրաստել այդ սրբաշահ համար ժողովածու նկատողութիւնները այդ կանոնադրութեան այն անհրաժեշտ փոփոխութիւնները ու լրացումները մասին, որոնց ցոյց է տուել կարելի և քաղաքացիական դատաւարութեան 25-ամեայ փորձը: Այդ առաջարկութիւնը ընդունվեց միաձայն: Երկրորդ խօսքը ընկերութեան նախագահ, Մոսկվայի համալսարանի նախկին պրոֆ. Մուրոմցեւի: Նա այդ կանոնադրութեան ազդեցութիւնը ուստաց կենսելի վրա որոշեց այսպէս. 1) այդ կանոնադրութիւնը մատեցրեց ժողովուրդը դատաստանին, հաշտեցրեց նրա հետ ժողովուրդը: 2) Օրենսդրութիւնը նոր դատաստանները մատեցրեց կենսելի և 3) նոր օրենքները երդուեալ իրաւասունների (присяжный судъ) միջոցով զօրացրին խղճի:

կան մի այնպիսի նոր ձև, ունեն այնպիսի ամանակներ (tempo), այնպիսի նոր խաղեր, որ կարող են հետաքրքրել ամեն մի երաժշտի. ուստի և եկող անգամ միտք ունեն խօսել զրանց վրա և բացատրել այնպիսի որչափ որ կարող եմ:

Բանաստեղծութիւնները մի մասը պարբերական են, մի մասը օրհնագրեր, միւս մասը սիրային և տխուր երգեր, մի այլ մասը երգիծական և մեծ մասը կրօնական: Կան նաև անբարոյական երգեր, որոնք աւելի տրամախօսական (dueto) ձևեր ունեն, այսինքն երգի մէջ խօսում են երկու անձինք, հակաճառում են և վերջը համաձայնվում:

Եւ առաջ կը բերեմ իւրաքանչիւրից մի քանի հատ ընտիրները:

Հ ո Վ Ո Ւ Լ Ի Ե Ր Գ Ր Է

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինակն քունն անուշ.
Ծաղիկ լուսնակ երկնուց
Հովուի փողն 1) էր անուշ
Խոտաղ 2) եղնիւ կարածայ 3),
Մաճկալ պառկեմ, քունն անուշ:
Չղզղուն քամին կը փչէ
Ծովային հովն էր անուշ 4)

1) Սրինդ. 2) Մշակ. 3) Վարածայ բառը խիզախներէ բարբառով է. 4) Սոյն երկու տողերը արդէն ցոյց է տալիս, որ մի գրագէտ մարդ է նրանց հեղինակը:

արդարութեան ազդեցութիւնը դատաւարութեան վրա: Երկրորդ խօսքը ընկերութեան պատուաւոր անդամ Ա. Ֆալկովսկի: Նիստի վերջում նախագահի առաջին օգնական Վ. Գոլցեւ կարգաց ճառ ընկերութեան պատուաւոր անդամ, Պետերբուրգի համալսարանի նորերումս վախճանված պրոֆէսոր Գրադովսկոյ յիշատակին: Հետեւ յետոյ ընկերութիւնը յոտնկայս յարգեց հանգուցեալի յիշատակը, յայտնելով իւրին ցաւակցութիւն այդ կորուստի առթիւ:

Նոյեմբերի 21-ին Պետրովսկայ գիւղատնտեսական Ակադեմիան տօնում էր իր հիմնադրութեան տարեդարձը և իր պատուաւոր անդամ ու պրոֆէսոր Ստերուտի գիտնական ու գործնական գիւղատնտեսական գործունէութեան 35 ամեայ յօբելեանը: Պրոֆէսոր Ստերուտի յօբելեանը հաւաքել էր Պետրովսկայ Ակադեմիայում անգլիկ բազմութիւն: Տարեկան հանդիպին կարգաված տարեկան հաշիւը երևում է, որ այժմ Ակադեմիայում կայ 302 ուսանող և 35 ազատ ունկնդիր (անցեալ ուսումնական տարւոյ ընթացքում եղել է 306 ուսանող և մօտ 40 ունկնդիր): Հայ ուսանողներ Ակադեմիայում կան մօտ 20 հոգի, այսինքն բոլոր ուսանողների 6—7 0/0-այդ բաւական մեծ տոկոս է առեւտրական համարվող ազգի համար, որը ամբողջ Ռուսաստանի ազգաբնակչութեան մօտ 10/0 է կազմում. այսինքն դուրս է գալիս, որ առեւտրական համարվող ազգը ոչ միայն չէ խորշում երկրագործութիւնից, գիւղատնտեսութիւնից, այլ ընդհակառակն աւելի հակումն է ցոյց տալիս դէպի նա, քան միւս ազգութիւններն (չը պէտք է մոռանալ, որ գիւղատնտեսական բարձրագոյն ուսումնարանը շատ հեռու է հայերի հայրենիքից, եթէ այդ հանդամանքը չը լինէր հայերի թիւը աւելի շատ կը լինէր Ակադեմիայում): Անցեալ տարւոյ տարեկան հաշիւը դեռ չեմ տեսել, բայց մի և նոյնն է, կարելի է օգտվել 1887—88 տարեկան հաշիւից: Այդ ուսումնական տարւոյ 306 ուսանողից վաճառականական ծաղումն ունեցին են 16 հոգի, եթէ դրա վրա աւելցնենք մեշանների կէտը (մեշանները եղել են 68 հոգի), որովհետև մեշանները թուում հաշուում են բացի մանր առեւտրականներից, նոյնպէս և արհեստաւորներ և այլն, կը ստանանք մօտ 50 ուսանող առեւտրական դասակարգից և 256 ուսանող ուրիշ դասակարգից—ազնական, ծառայող, հողերական, գիւղական և այլն: Նոյն տարեկան հաշիւը երևում է, որ 306 ուսանողից 19-ը հայ են եղել և 7 հրէայ, մինչդեռ օր. համալսարանում, քանի չէր սահմանափակված հրէաների ընդունելութիւնը (այժմ հրէաների թիւը համալսարանում չը պէտք է բոլոր ուսանողների 30/0-ից աւելի լինի) նրանք քանակութեամբ մի քանի անգամ դերագանցում էին հայերից: Աւելցրէք այս թւանշանները վրա և այն մեղաների թիւը, որ ստացել են հայերը թիւֆլիսի գիւղատնտեսական ցուցահանդէսում և դուք կը ստանաք հասարակ թւանշանների վրա հիմնված, բայց չափազանց համոզիչ հերքումն այն անհիմն կարծիքի թէ հայերը երկրա-

Դաշտեր, ձորեր միջեր են,
Ջրեր կլկլան, ձէնն անուշ:
Խաւեր թռան իրենց պէտն 1)
Բիւրբիւլ տաղն էր անուշ. 2)
Անմահական խոտ 3) բուրբ
Քեաֆուր վարդի 4) խոտն անուշ:
Քնարիգական (lyrique) այս բանաստեղծութիւնը շատ է երգվում Վասպուրականում և մի գեղեցիկ եղանակով՝ որը շատ յարմար է խօսքերին: Այսպիսի երգեր թէն շատ կան, բայց լաւագոյնը այս է:

Սրտաճմիրի են առհասարակ պանդխտութեան երգերը, որոնցից մի քանիսը երգված են պանդխտանից, իսկ միւսները պանդխտ ունեցողներից: Թէ վասպուրականցիք և թէ մեցիք, տարին մի անգամ պանդխտութեան են դիմում հազարներով, ուստի և շատ բնական է, երբ այդ երգերից շատերը յարատաւ գրգռեն քեզ: Ահա մի քանիսը:

Մ շ Ա Ե Լ Ի Ե Վ Ո Ւ Լ Ի Ե Ր Գ Ր Է

Լէ, Լէ, Լէ... Լէ, վայ Լէ...
Մըր խոր, պապիկ գերեզման
Թողի, հոս տեղ կու կեամ ման
Խօքիս կեղնէ իւրի 5) տակ

Մ շ Ա Ե Լ Ի Ե Վ Ո Ւ Լ Ի Ե Ր Գ Ր Է

Լէ, Լէ, Լէ... Լէ, վայ Լէ...
Մըր խոր, պապիկ գերեզման
Թողի, հոս տեղ կու կեամ ման
Խօքիս կեղնէ իւրի 5) տակ

1) Պէտն—բոյն. 2) Այստեղ նորից սկսվում է վասպուրականցիների բարբառը. 3) Հոտ. 4) Մի տեսակ անուշահոտ կարմիր վարդ է. 5) Բնա:

գործական ժողովուրդ չեն: Ասենք համոզել կարելի է միայն նրանց, որոնք անկեղծ ցանկանում են համոզել և համոզվել, իսկ նրանց, որոնք ոչ թէ համոզվել, այլ հայնդել են ուղում, ֆրիստոսն էլ որ երկնքից իջնի՝ չի համոզի...

Տարեդարձի հանդէսից յետոյ ժամի 2-ին ըսկսվեց յօբելեանի հանդէսը: Պաշտօնական հանդէսը սկսվեց առաջ ուսանողները իրանց սիրելի պրոֆէսոր Ստերուտին հրաւիրեցին իրանց բնակարանը (Ակադեմիայի վարչութիւնը չիւնել է անհրաժեշտ, բաժանված փոքր սենեակներ, որ արժան գնելով վարձով է տալիս ուսանողներին. բնակարանը չիւնված է շատ յարմար և առողջապահական կանոններին համաձայն): Այնուհետ, ընթերցարանում, շնորհաւորեցին նրա յօբելեանը, մի ուսանող ճառ կարդաց՝ բոլորի կողմից. պրոֆէսորը յօբելեանը շնորհակալութիւն յայտնեց ուսանողներին և իր կողմից ճառ արտասանեց, որ ուսանողները և հասարակութիւնը որի մի մասը նոյնպէս ներկայ էր այդպեղ, ընդունեցին բուռն ծափահարութիւններով և աղմկով բացականչութիւններով: Այդ տեղից բոլորը գնացին Ակադեմիայի շինութիւնը, յօբելեանին ուսանողները ձեռների վրա բարձրացրին սանդղատներով և տարան հանդիսարանը, որը շքեղ զարդարված էր այդ օրը արևադարձային բոյսերով: Հանդէսը սկսվեց յօբելեանի կարգադրիչ յանձնաժողովի նախագահ պրոֆէսոր Շեռնիկի ճառով: Երկուր Ակադեմիայի վերատեսուչ Իւնդէ կարդաց պետական կալուածների մինիստր սո. սեկր. Օստրովսկոյ նամակը յօբելեանին, որով նա իր շնորհաւորութեան հետ հաղորդում էր, որ թագաւոր կայսրը աչքի առաջ ունենալով նրա բազմամեայ և օգտակար գործունէութիւնը գիւղատնտեսութեան օգտին՝ բարեհաճել է շնորհել նրան իսկական պետական խորհրդականի աստիճանը կարգացին նոյնպէս և նորին բարձրութիւն պրինցեսսա Եւգենիա Մաքսիմիլիանովնա Օլգինբուրգեանի շնորհաւորութիւնը և մի քանի օրիշ պաշտօնական շնորհաւորութիւններ: Երկուր սկսեցին ներկայանալ զանազան պատգամաւորութիւններ: Ստերուտի նախկին ուսանողների պատգամաւորը ընծայեց յօբելեանին շքեղ ալբոմ լուսանկարներով. ոսկեգծած արծաթէ կաղնի առաջին երեսին նկարած է Պետրովսկայ ակադեմիան, միւս երեսին գրած է «Սերբիկ ուսուցչին բարեկամներից, ընկերներից և աշակերտներից»: Պատգամաւորները յայտնեցին, որ նրա նախկին ուսանողները հաւաքել են 2000 ր. նրա անուանը մրցանակ հիմնելու, որ կը ստանան ակադեմիստները ամենալաւ գիւղատնտեսական շարագրութեան համար: Այդ համակրութեան ցոյցը խորին տպաւորութիւն գործեց ծերունի յօբելեանի վրա. նա յայտնեց, որ ինքն ամենից բարձր է դասում իր ուսանողների գնահատութիւնը, որոնք ամենից մօտիկ են եղել իրան և ամենից լաւ կարող են ճանաչել իրան. պատգամաւորներին (իւր նախկին ուսանողներին) նա մէկ մէկ գրից և համբուրեց: Սկսեցին կարդալ շնորհաւորական ուղերձներ, նամակներ և հեռագրիներ զանազան բար-

Խաւաւ, տիտաւ վաստակ...
Վայ Լէ, վայ Լէ:
Քանի զուրբաթն 1) և մի ինքեր
Մէջից կօտին չըմ քակեր 2)
Խորանուկ անուշ—անթաւամ,
Քեզինց զատ՝ կինն է խաւամ 3)...

Վայ Լէ, վայ Լէ...
Սէ, իմ ախպրը, Ստամբոլ
կասեք ճէշ է 4), փարան բոլ 5)
Խաւերթ մ'անէք 6), մեղ հալալ
Մըր խոր միւրքն է ու մալալ 7)...

Վայ Լէ, Լէ, Լէ...
Հիմիկ, լաճերս ինչքան են,
Ողջ են, կորան, ինչ կանեն,
Կրպոն, Մրտոն խորտիկ 8)
Սիրուն Հուշան նէրտիկ 9)...

Վայ Լէ, Լէ, Լէ...
Հիմիկ, լաճերս ինչ կեղնի,
Ինձինց մահում 10) կու դեղնի.
Յամբի չուշան, նուռնափար
Գոմից պակի մըր զուրբ 11)...

ճարտան ուսումնարաններից, գիւղատնտեսական ուսումնարաններից, գիտնական ընկերութիւններից, համարեա բոլոր գիւղատնտեսական ընկերութիւններից (ի միջի այլոց Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնից), որոնցից շատերը նրան պատուաւոր անդամ են ընտրել, զանազան ուրիշ հաստատութիւններից և ընկերութիւններից (ի միջի այլոց վրաց «Մէուր-նէից») շինական հաստատութիւններից (Земледелие учреждения): Երկուր կարգացին հարիւրից աւելի հեռագրիներ զանազան մասնաւոր անձինքներից, նախկին ուսանողներից և այլն: Դաւանակի սղութեան պատճառով հեռագրիները մեծ մասը չէին կարդում, այլ միայն յայտնում էին, թէ ումից են: Հանդէսը վերջացաւ յօբելեանի ճառով, համեստ և խելօք, զգացված ճառով, որով նա իր խորին և անկեղծ շնորհակալութիւնները յայտնում ամենքին նրանց շնորհաւորութիւններին և համակրութեան յարգանքի համար: Հանդէսը տեւեց 2 ժամ: Երկուր յան ժամի 6-ին Մոսկվայում (Ակադեմիան քաղաքից դուրս է գտնվում, մի քանի վերստ հեռաւորութեամբ, անտառի մէջ, լճակի ափին), «Լյութաւ» հիւրանոցի դահլիճում հանդիսաւոր ճաշկերոյթ կայացաւ ի պատիւ յօբելեանի: Այդ հանդէսի ամենահամակրելի կողմը այն անկեղծութիւնն էր, որ պակասում է շատ պաշտօնական յօբելեաններին, իսկ առանց անկեղծութեան, առանց ուղերձի հասարակութեան մասնակցութեան՝ յօբելեանը կորցնում է իր գինը: յօբելեանի համար մի կողմից և իր դաստիարակիչ նշանակութիւնը հասարակութեան համար միւս կողմից:

Տ. Թ.
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շատերը մեր բաժանորդներից շատ ուշ են գրովում: Օրինակ պատահում է, որ մէկը հիմա գրովում է «Մշակին» պահանջելով, որ սկստեմբեր ամսի համարներից սկսած մեր լրագրի բոլոր համարներն ուղարկենք: Բայց եթէ պարոնը այդպէս ուշ գրովում, բոլոր համարները չի ըստանայ, թող դժգոհ չը լինի: Այսքան ուշ գրովում ենք և մեղաւոր և չէ կարող յուսալ, որ խմբագրատանը գտնվին բոլոր համարները:

Խնդրում ենք բաժանորդներին, փողը և հասցէն ուղարկելուց առաջ հաստատապէս որոշել և հաստատապէս տեղեկացնել թէ ում անունով պիտի ուղարկվի «Մշակը»: Մենք հասցէն ստանալուն պէս, անմիջապէս տպում ենք հասցէն, բայց պատահում է որ յանկարծ երկու օր չէ անցնում, նոյն բաժանորդը գրում է. «Հասցէն փոխեցէք»: Եւ ահա մենք ստիպված ենք նոր տպված հասցէն կրկին շնչել և նորը տպել: Խոնարհաբար խնդրում ենք այսքան նեղութիւն չը պատճառել խմբագրութեանը:

Խաւերս կապա 1) հնոտի
Երբ օր երգեմ երգ երկրին
Աչիցս արցունք կը ցամբին 2) վայ Լէ, Լէ.
Արն շողեր է պծառ
Նաշտուն ա դաշտ, ճեղն ու ծառ
Երթիս վերն են հաւեր
Կու ճվլան մըր խաւեր 3)...

Վայ Լէ, Լէ, Լէ...
Դիւնա 4)...

1) Վերարկու. 2) այսինքն այնպիսի լալիս եմ, որ այլ ևս արցունք չէ մնում. 3) Թաշուններ. 4) Ահաւակ:

